2126.11/1913

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«05» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0048-21

Ձեռնարկողը՝ ***«Արարատցեմենտ» ՓԲԸ***
Ք.Արարատ, Շահումյան 5

Գործունեությունը՝ ***Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների և կավերի բացահանքերի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արարատի մարզի

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0048-21

« 05 » 03 2021թ.

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների և կավերի բացահանքերի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն՝ կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	Ա կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Արարատ քաղաքից դեպի հյուսիս

Ներածական մաս. «ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ» ՓԲ ընկերությունը նախատեսում է իրականացնել Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանում:

Նախատեսվող գործունեությանը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի գ) ենթակետի հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրը գտնվում է Արարատի մարզում, Արարատ քաղաքից դեպի հյուսիս, ցեմենտի գործարանից մոտ 4-4.5կմ հեռավորության վրա:

Մոտակա բնակավայրերն են Արարատ և Վեդի քաղաքները, Ավշար և Գոռավան գյուղերը:

Հանքավայրի տրավերտինների պաշարները որպես ցեմենտի հումք 302093 հազ.տ քանակով հաստատվել է ԽՍՀՄ ՊՊՀ-ի կողմից 25.05.1976թ.-ի N7631 արձանագրությամբ:

Հանքավայրի հարավային տեղամասում տրավերտինների հաստաշերտը հիմնատակող կավերի պաշարները որպես ցեմենտի հումքի բաղադրիչ 27737 հազ.տ ընդհանուր քանակով հաստատվել է ԽՍՀՄ ՊՊՀ-ի կողմից 19.05.1989թ. N10658 արձանագրությամբ:

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ն Արարատի տրավերտինների և կավերի բացահանքերը շահագործվում է սկսած անցած դարի 30-ական թվականներից:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՀ ԵՐԵՎԱՆ ՀՈՍ ՈՒՆԵՑՈՂ ՍՊԱՍԱՐԿՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Տրավերտինների և կավերի հանքավայրի մնացորդային հաշվեկշռային պաշարները ցեմենտի արտադրության համար 01.01.2020թ-ի դրությամբ կազմում են. տրավերտիններ A+B+C_1 կարգերի 246883.6 հազ.տ, կավեր A+B+C_1 կարգերի 20331.0 հազ.տ:

Նագագծվող բացահանքերի շահագործման ժամկետը սահմանվել է 50տարի:

Նախագծվող բացահանքերի տարածքներն՝

- տրավերտինների բացահանք 79.58հա,
- արդյունաբերական արդյունահանվող պաշարները – 19006.4հազ.խմ կամ 47706.1հազ.տ,
- կավերի բացահանք 47.35հա,
- արդյունաբերական արդյունահանվող պաշարները 9552.0հազ.խմ կամ 16811.5հազ.տ

Վարչատարածքային բաժանմամբ ընդլայնվող տրավերտինի բացահանքի տարածքը գտնվում է Արարատի մարզի Ավշար համայնքում, սահմանազատված ստորև ներկայացվող ծայրակետերով տեղամասում.

1. X=8474929,0; Y= 4415782,0
2. X=8474900,0; Y= 4416474,0
3. X=8475090,0; Y=4416555,0
4. X=8475070,0; Y=4416768,0
5. X=8475223,0; Y=4416714,0
6. X=8475970,0; Y=4416244,0
7. X=8475971,0; Y=4415750,0

Հանաքավայրի տարածքի ծայրակետերի կոորդինատները ARM WGS 84 համակարգով.

1. X=8474895,296 Y=4413330,609
2. X=8474887,972 Y=4413334,600
3. X=8474841,958 Y=4413391,121
4. X=8474768,732 Y=4413477,619
5. X=8474655,544 Y=4413687,059
6. X=8474641,777 Y=4413759,910
7. X=8474690,635 Y=4413979,547
8. X=8475410,980 Y=4413965,000
9. X=8475560,815 Y=4413690,000
10. X=8475301,000 Y=4413330,000

Տրավերտինների բացահանքերի շահագործման համար ընդունված են միակողմանի ընդերկայնական ընթացաշերտերով մշակման համակարգ մակաբացման ապարներն արտաքին լցակույտեր տեղափոխելով:Հանքաստիճանների բարձրությունը բացահանքերում ընդունված է 10մ:

Տրավերտինի բացահանքում մակաբացման ապարների հեռացումը կատարվում է առանց նախնական փխրեցման՝ բուլդոզեր Т-170, էքսկավատոր ЭО-4321, ավտոինքնաթափ КамАз 5511 լեռնատրանսպորտային համալիրով:

Կավերի բացահանքում մակաբացման ապարները բացակայում են:

Տրավերտինների զանգվածի հանքարդյունահանման աշխատանքները կատարվում են հորատանցքային լիցքերով, նրանց նախնական փխրեցումից հետո: Հորատանցքերի հորատումը նախատեսվում է կատարել տեղում առկա БТС-150 կամ СВБ-2М հորատման հաստոցների միջոցով:

ՀՀ ԲՆՕՐՀՆԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՐՄ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ՀՊԿ
ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ - ЭЦОВС
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER - SNCO
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Կավերի զանգվածի արդյունահանումը հիմնականում կատարվում է առանց նախնական փխրեցման: Առանձին դժվար մշակվող տեղմասերում հնարավոր է մասնակիորեն նրանց նախնական փխրեցումը:
Բացահանքերում օգտակար հանածոների հանույթաբարձման աշխատանքները կատարվում են 5.0 խմ շերեփի տարողությամբ ЭКГ-5А էքսկավատորով, որոնք հետագայում կարող են փոխարինվել 4,8-5խմ շերեփի տարողությամբ CAT-365 էքսկավատորներով:
Արդյունահանված տրավերտինների և կավերի տեղափոխումը մինչև ցեմենտի գործարան կատարվում է 30տ բեռնատարողությամբ БелАз 7522 ավտոինքնաթափերով, որոնք հետագայում կարող են փոխարինվել 40տ բեռնատարողությամբ БелАз 7547 ավտոինքնաթափերով:
Տրավերտինների բացահանքերում մակաբացման ապարները պահեստավորվում են արտաքին լցակույտում: Կավերի բացահանքում մակաբացման ապարները բացակայում են:

Նախագծվող բացահանքերի պարամետրերն են՝ հ	Պարամետրերի անվանումը	Չափման միավորը	Տրավերտինների բացահանք	Կավերի բացահանք
1	Առավելագույն երկարությունը	մ	1051	920.0
2	Առավելագույն լայնությունը	մ	940	650.0
3	Առավելագույն խորությունը	մ	90	90.0
4	Օտարման տարածքը	հա	79.58	47.35
5	Տրավերտինների հաշվեկշռային պաշարները	հազ.մ^3	20525,3	399.6
		հազ.տ	51518.5	1003.0
6	Տրավերտինների արդյունաբերական պաշարները	հազ.մ^3	19006,4	368.0
		հազ.տ	47706.1	932.7
7	Կավերի հաշվեկշռային պաշարները	հազ.մ^3	-	11551.7
		հազ.տ	-	20331.0
8	Կավերի արդյունաբերական պաշարները	հազ.մ^3	-	9552.0
		հազ.տ	-	16811.5
9	Մակաբացման ապարների քանակը	հազ.մ^3	237,6	-
10	Մակաբացման միջին գործակիցը	մ^3/տ	0,012	-

Արտաքին լցակույտերի զբաղեցրած տարածքները կազմում են՝
Տրավերտինների բացահանք -2,9հա,
Կավերի բացահանք – մակաբացման ապարները բացակայում են:

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ «ԷԿՍՊԵՐՏԻԶԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ГОСУДАРСТВЕННОЕ ПРЕДПРИЯТИЕ ГОСУДАРСТВЕННОЕ НЕКОММЕРЧЕСКОЕ ОБЩЕСТВЕННОЕ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO * РА ЕРЕВАН * ՀՈՒՆ * РА ЕРЕВАН
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Տրավերտինների և կավերի քանակները բովախառնուրդում ընդունված են համապատասխանաբար 75% և 25%:

Օգտակար բաղադրիչների տարեկան արտադրողականություններն ընդունված են՝

1. 2020-2032թթ.- տրավերտիններ 621.8հազ.տ, կավեր – 206.2հազ.տ;
2. 2033-2047թթ. – տրավերտիններ -932,6հազ.տ, կավեր-309,2հազ.տ;
3. 2048-2069թթ. – տրավերտիններ – 1243,5հազ.տ, կավեր –412,4հազ.տ:

Խմելու ջուրը բացահանքերի արդյունաբերական հրապարակ նախատեսվում է բերել ցեմենտի գործարանի արդյունաբերական հրապարակից ВЦВ 1.1 կցովի ջրի ցիստեռնով, իսկ տեխնիկական ջուրը КО -002 ջրցան լվացող ավտոմեքենայով:

Կենցաղային կեղտաջրերը ինքնահոս կերպող թափվում են զուգարանի ջրամերժ պատերով հորը, որտեղից էլ հեռացվում են հատուկ աղբահան մեքենայով:

Բացահանքերի տարածքներում գետնաջրերը բացակայում են: Տրավերտինների բացահանքերի տարածքը թափվող մթնոլորտային տեղումները մեծամասամբ ներծծվում են հատակի ճեղքավորված ապարների միջով, իսկ մի փոքր մասն էլ հեռանալու է ինքնահոս կերպով, ցածր հորիզոնը թափվող տեղումները հավաքվելու են 500խմ տարողությամբ պարզարանը, որտեղ պարզվելուց հետո օգտագործվելու են տեխնիկական նպատակների համար:

Բացահանքերի շահագործումը նախատեսվում է տարեկան 228 օր 8ժամ տևողությամբ 2 հերթափոխով: Բացահանքերի օրական և ժամային արտադրողականությունները կազմում են՝

		2020-2032 թվերին	2033-2047 թվերին	2048-2069 թվերին
Տրավերտիններ	տ/օր	2727.2	4090.3	5453.9
	տ/ժամ	170.5	255.6	340.1
Կավեր	տ/օր	904.4	1356.1	1808.8
	տ/ժամ	56.5	84.7	113.1

Անտառային և բուսական ծածկույթը հանքավայրի տարածքում բացակայում է:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր են հանդիսանում բացահանքը, տեխնիկական և տրանսպորտային միջոցները, լցակույտերը: Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝ անօրգանական փոշին, ազոտի և ածխածնի օքսիդները, ածխաջրածինները, պինդ մասնիկները (մուր), ածխածնի մոնօքսիդ, ծծմբի երկօքսիդ: ՇՍԱԳ հաշվետվությունում հաշվարկվել են արտանետումների քանակները: Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ /"էռա" ("ЭРА") համակարգչային ծրագրով/: Համաձայն հաշվարկների արդյունքների արտանետվող նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները չեն գերազանցում սահմանված ՍԹԿ-ը:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման /վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ),

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ГОРОДА ЕРЕВАНА
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:

- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:
- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն:
- Կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:
- Մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակի մշտադիտարկում:
- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:
- Կեղտաջրերի հավաքում սեպտիկ հորերում, և հեռացում հատուկ ծառայության ուժերով:
- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:
- Ընդերքօգտագործման և կենցաղային թափոնների պատշաճ կառավարում:
- Արտադրական տարածքների կանաչապատում:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախահաշվային արժեքը (հաշվարկման բազային չափ՝ ըստ ՀՀ կառավարության 23.08.2012թ.-ի N 1079-Ն որոշման) կազմում է 2.46մլն+4.29մլն դրամ=6.75մլն դրամ: Ընդլայնված բացահանքերի շահագործման աշխատանքային ծրագրում ներառվելու են բոլոր անհրաժեշտ միջոցառումները խախտման ենթակա հողերի վերականգնման նպատակով, հաշվարկվելու են աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ իրատեսական գումարները:

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի շահագործման ընթացքում «Արարատցեմենտ» ՓԲ ընկերությունը նախատեսում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- օդը, ջուրը, հողն ու ընդերքն աղտոտող վնասակար նյութերի առավել թույլատրելի խտությունների չափումներ;
- վնասակար նյութերի սահմանային թույլատրելի չափերն արտանետումներում և արտահոսքերում.
- աղմուկի, վիբրացիայի, էլեկտրամագնիսականության, ռադիացիոն ճառագայթման և այլ ֆիզիկական ազդեցությունների սահմանային թույլատրելի մակարդակները.
- հողերի գոտևորման ռեժիմները, քաղաքաշինական կանոնները.
- գյուղատնտեսական հողերի պահպանության կանոնները.
- սանիտարական պաշտպանիչ գոտիների նվազագույն չափերը.
- բնակչության և նրա առանձին խմբերի առողջական վիճակը բնորոշող ցուցանիշները:

Շահագործման աշխատանքների հետո իրականացվելու է արդյունահանման աշխատանքների արդյունքով խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ
ՊՈՂՈՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ 1
ՀՈՒՍԱ ՓԵՂԱՅ, ԼԻՈ * ՍՆՈ
ՀՀ ԵՐԵՎԱՆ
«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ
«ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER»
STATE NON-PROFIT ORGANIZATION
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Բացահանքերի շահագործման աշխատանքներն ավարտելուց անմիջապես հետո նախատեսվում է խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնում:

Քանի որ տրավերտինների և կավերի բացահանքերի հատակում ընկած են կավերի հաստաշերտեր, որոնք բազային հումք են հանդիսանում ցեմենտի արտադրության համար, ինչպես նաև որպես հումք տնտեսական նշանակություն ունեցող տնտեսության այլ ճյուղերում (հիդրոտեխնիկական կառույցներ, կերամիկական, շին.աղյուսների, կղմինդրների արտադրության և այլն) և միևնույն ժամանակ պոտենցիալ բուսահող են, խախտված հողերի վերականգնման համար, այդ պատճառով նախատեսվում է միայն բացահանքերի հատակի և լցակույտերի մակերևույթի հարթեցում (տեխնիկական ռեկուլտիվացիա), կենսաբանական ռեկուլտիվացիայի անհրաժեշտություն չկա:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, ինչպես նաև Արարատի մարզպետարանը:

Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հաշվետվությունը լրամշակվել է: Նախնական գնահատման հայտի և հաշվետվության փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Ավշար համայնքում և Արարատ քաղաքում անցկացվել են հանրային քննարկումներ գործունեության իրականացման վերաբերյալ, որը հանրության կողմից արժանացել է հավանության:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի արդյունահանման նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇԱՄԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին (շրջակա միջավայրի՝ մթնոլորտային օդի, հողի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա ազդեցության կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված բնապահպանական, արտակարգ իրավիճակների, անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումներին և ծրագրերին):

- Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն) մոնիթորինգի արդյունքները, հանքավայրեր շահագործող ընկերությունների կողմից՝ համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի և կառավարության «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ԿԵՆՏՐՈՆ
ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ МИНИСТЕРСТВА ПРИРОДНЫХ РЕСУРСОВ РА
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO * RA YEREVAN
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշման պետք է տրամադրվեն շրջակա միջավայրի նախարարությանը յուրաքանչյուր տարի և հրապարակվեն նախարարության կայքում՝ հանրային իրազեկվածության նպատակով:

- Հանքի շահագործման ժամանակ պահպանել աշխատանքի անվտանգության նորմերը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի համաձայն:
- Արդյունահանման աշխատանքներն ավարտելուց հետո անհրաժեշտ է ռեկուլտիվացիայի իրականացում:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ» ՓԲԸ կողմից Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների և կավերի բացահանքերի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Յու. Մատինյան